ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 21

Պարտադիր վճարներ

Հղումներ

- *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ՀՀՄՍ 1
- *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»* ՀՀՄՍ 8
- *«Շահութահարկեր»* ՀՀՄՍ 12
- *«Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում»* ՀՀՄՍ 20
- *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* ՀՀՄՍ 24
- *«Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ»* ՀՀՄՍ 34
- *«Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ»* ՀՀՄՍ 37
- *«Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների յուրահատուկ շուկայում մասնակցությունից առաջացող պարտավորություններ»* ՖՀՄՍՄԿ 6

Նախապատմություն

1. Կառավարությունը կարող է պարտադիր վճար սահմանել կազմակերպության համար: ՖՀՄՍ Մեկնաբանությունների Կոմիտեն պարտադիր վճար կատարող կազմակերպության համար ֆինանսական հաշվետվություններում պարտադիր վճարի գծով հաշվառման ուղեցույց կազմելու խնդրանքներ է ստացել: Խնդիրը հետևյալն է. երբ ճանաչել պարտադիր վճար կատարելու պարտավորությունը, որը հաշվառվում *է «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ»* ՀՀՄՍ 37-ի համաձայն:

Գործողության ոլորտը

2. Սույն Մեկնաբանությունը քննարկում է պարտադիր վճար կատարելու գծով պարտավորության հաշվառումը, եթե այդ պարտավորությունը գտնվում է ՀՀՄՍ 37-ի գործողության ոլորտում: Այն նաև քննարկում է հստակ ժամկետներով և գումարով հատկորոշված պարտադիր վճար կատարելու գծով պարտավորության հաշվառումը:

3. Սույն մեկնաբանությունը չի քննարկում այն ծախսումների հաշվառումը, որոնք առաջանում են պարտադիր վճար կատարելու գծով պարտավորության ճանաչումից: Կազմակերպությունները պետք է կիրառեն այլ ստանդարտներ՝ որոշելու՝ արդյոք պարտադիր վճար կատարելու գծով պարտավորության ճանաչումը առաջացնում է ակտիվ կամ ծախս:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

4. Սույն Մեկնաբանության նպատակներով՝ պարտադիր վճարը տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք է, որը կառավարությունը սահմանում է կազմակերպության համար՝ օրենսդրության համաձայն (այսինքն՝ օրենքներ և/կամ կանոնակարգեր), բացառությամբ՝

   ա) միջոցների այն արտահոսքերի, որոնք գտնվում են այլ ստանդարտների գործողության ոլորտում (ինչպես օրինակ՝ շահութահարկերը, որոնք գտնվում են *«Շահութահարկեր»* ՀՀՄՍ 12-ի գործողության ոլորտում), և

   բ) տույժերի կամ տուգանքների, որոնք սահմանվում են օրենսդրությունը խախտելու դեպքում:

   «Կառավարություն». վերաբերում է կառավարությանը, նախարարություններին, գերատեսչություններին և համանման մարմիններին՝ անկախ նրանից՝ դրանք տեղական են, ազգային, թե միջազգային:

5. Կառավարության հետ պայմանագրային համաձայնությամբ ակտիվ ձեռք բերելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով կազմակերպության կողմից կատարած վճարումը չի բավարարում պարտադիր վճար կատարելու սահմանումը:

6. Կազմակերպությունից չի պահանջվում կիրառել սույն Մեկնաբանությունը այն պարտավորությունների համար, որոնք առաջանում են արտանետումների առևտրային համակարգերի (քվոտաների) հետևանքով:

Խնդիրները

7. Պարտադիր վճար կատարելու գծով պարտավորության հաշվառումը հստակեցնելու նպատակով սույն Մեկնաբանությունը քննարկում է հետևյալ խնդիրները՝

   ա) որն է այն պարտավորեցող դեպքը, որը հանգեցնում է պարտադիր վճար կատարելու գծով պարտավորության ճանաչման,

   բ) արդյոք ապագա ժամանակաշրջանում կազմակերպության գործունեությունը շարունակելու տնտեսական անհրաժեշտությունը հանգեցնում է պարտադիր վճար կատարելու գծով կառուցողական պարտականության, որը կառաջանա այդ ապագա ժամանակաշրջանում գործունեություն իրականացնելիս,

   գ) արդյոք կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրությունը ցույց է տալիս, որ կազմակերպությունը ունի պարտադիր վճար կատարելու գծով ներկա պարտականություն, որը կառաջանա այդ ապագա ժամանակաշրջանում գործունեություն իրականացնելիս,

   դ) արդյոք պարտադիր վճար կատարելու գծով պարտավորությունը ճանաչվում է միանգամից, թե որոշ դեպքերում՝ աստիճանաբար՝ ժամանակի ընթացքում,

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ե) որն է այն պարտավորեցող դեպքը, որը հանգեցնում է որոշակի նվազագույն շեմին հասնելու հետևանքով պարտադիր վճար կատարելու գծով պարտավորության ճանաչման,

զ) արդյոք տարեկան ֆինանսական հաշվետվություններում և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունում պարտադիր վճար կատարելու գծով պարտավորության ճանաչման սկզբունքները նույնն են:

Փոխհամաձայնություն

8. Պարտադիր վճար կատարելու պարտավորությանը հանգեցնող պարտավորեցնող դեպք է համարվում այն գործունեությունը, որն առաջացնում է պարտադիր վճարի կատարում, ինչպես սահմանված է օրենսդրությամբ: Օրինակ, եթե պարտադիր վճարի կատարում է առաջացնում գործունեությունը, որի հետևանքով ընթացիկ ժամանակաշրջանում հասույթ է գեներացվում, և այդ պարտադիր վճարի հաշվարկը հիմնված է նախորդ ժամանակաշրջանում ստացված հասույթի վրա, ապա այդ պարտադիր վճարի կատարման պարտավորեցնող դեպք է համարվում ընթացիկ ժամանակաշրջանում հասույթի գեներացումը: Նախորդ ժամանակաշրջանում ստացված հասույթը անհրաժեշտ է, բայց ոչ բավարար, ներկա պարտականություն ստեղծելու համար:

9. Ապագա ժամանակաշրջանում կազմակերպության գործունեությունը շարունակելու տնտեսական անհրաժեշտությունը այդ կազմակերպության համար չի հանգեցնում պարտադիր վճար կատարելու գծով կառուցողական պարտականության, որը կառաջանա այդ ապագա ժամանակաշրջանում գործունեության իրականացման արդյունքում:

10. Անընդհատության ենթադրությամբ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը չի ենթադրում, որ կազմակերպությունը ունի պարտադիր վճար կատարելու գծով ներկա պարտականություն, որը կառաջանա ապագա ժամանակաշրջանում գործունեության իրականացման արդյունքում:

11. Պարտադիր վճար կատարելու գծով պարտավորությունը ճանաչվում է աստիճանաբար, եթե պարտավորեցնող դեպքը տեղի է ունենում ժամանակաշրջանի ընթացքում (այսինքն՝ եթե այն գործունեությունը, որն առաջացնում է պարտադիր վճարի կատարումը, ինչպես սահմանված է օրենսդրությամբ, իրականացվում է ժամանակաշրջանի ընթացքում): Օրինակ, եթե պարտավորեցնող դեպք է համարվում ժամանակաշրջանի ընթացքում հասույթի գեներացումը, համապատասխան պարտավորությունը ճանաչվում է, երբ կազմակերպությունը գեներացնում է այդ հասույթը:

12. Եթե պարտադիր վճար կատարելու պարտականությունը առաջանում է, երբ կազմակերպությունը հասնում է նվազագույն շեմին, այդ պարտականությունից առաջացող պարտավորության հաշվառումը պետք է համապատասխանի սույն

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Մեկնաբանության 8-14 պարագրաֆներում (մասնավորապես, 8 և 11 պարագրաֆներում) սահմանված սկզբունքներին: Օրինակ, եթե պարտավորեցնող դեպք է համարվում գործունեության նվազագույն շեմը (ինչպես օրինակ՝ վաճառքից հասույթի նվազագույն գումարը կամ արտադրված արտադրանքի նվազագույն քանակը), համապատասխան պարտավորությունը ճանաչվում է, երբ կազմակերպությունը հասել է գործունեության այդ նվազագույն շեմին:

13. Կազմակերպությունը միջանկյալ ֆինանսական հաշվետվությունում պետք է կիրառի ճանաչման այն նույն սկզբունքները, որոնք կիրառում է տարեկան ֆինանսական հաշվետվություններում: Արդյունքում, միջանկյալ ֆինանսական հաշվետվությունում պարտադիր վճար կատարելու գծով պարտավորությունը՝

ա) չպետք է ճանաչվի, եթե միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի ավարտին պարտադիր վճար կատարելու որևէ ներկա պարտականություն չկա, և

բ) պետք է ճանաչվի, եթե միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի ավարտին պարտադիր վճար կատարելու որևէ ներկա պարտականություն կա:

14. Կազմակերպությունը պետք է ճանաչի ակտիվ, եթե պարտադիր վճարի գծով կատարել է կանխավճար, բայց դեռ չունի պարտադիր վճարը կատարելու ներկա պարտականություն:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Հավելված Ա

Ուժի մեջ մտնելը և անցումը

Սույն հավելվածը հանդիսանում է սույն Մեկնաբանության անբաժանելի մասը և ունի այն նույն իրավասությունը, ինչ սույն Մեկնաբանության մյուս մասերը:

Ա1. Կազմակերպությունը պետք է կիրառի սույն Մեկնաբանությունը 2014 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը կիրառում է սույն Մեկնաբանությունը ավելի վաղ ժամանակաշրջանի համար, պետք է բացահայտի այդ փաստը:

Ա2. Սույն Մեկնաբանության սկզբնական կիրառումից առաջացող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները պետք է հաշվառվեն հետընթաց՝ *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»* ՀՀՄՍ 8-ի համաձայն:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ